նալուն յետոյ ապա թէ մեք այլ կ'երթամք։ Ստոյգ որ հինգ վեց օր չգնացին, մինչեւ որ Խոճա Վարդանն եւ Խոճա Աստուածատուրն գնացին ի Փաչան. այնպէս ճեվապ տուեր՝ թէ նոցա թագաւորն խաղիշարիֆ է տուեր, մեք վեղիր Ազեմին յարդ կ'անեմք, ձեզի հոգ չէ։ Յետ վեց աւուր ապա թէ գնացին ամամներն Քեահային մօտն, ասեր է՝ թէ ձեզի կրկին յեմր մի կու տամք որ հաթիշարիֆն եւ թագաւորին հրամանն տեղն գտնէ։ Մինչ ի յայս խորհրդեանն էին, Հոդեւորտիրուն Ըստամպոլու գիր եկաւ՝ թէ մեք ի հոս կրկին խաղաղութիւն արարաք. եւ երկուց կողմանց գիր ուղարկեցաք առ Եղիազար Հոդեւորտէրն որ գայցէ ի Ստամպոլ կամ ի Պուրսա, որ զիրեարս տեսանեմք եւ ճշմարիտ սէր եւ խաղաղութիւն հաստատեմք։ Եւ մեք այլ ի հոս կրկին յէտրանա, քահանայիւք եւ ժողովրդեամբ, զդրքա հետ միմեանց հաշտեցուցաք, որ գնան ի Ստամպոլ, այլ հետ մէկմէկի աւել պակաս խօսք չանեն ի դուռն արքունի։ Այսպէս եղեւ առաջի մեր եւ ամենեցուն, եւ թէ աւելի կամ պակաս այլեւայլ խօսիւք գիր գայ՝ չաւատաս, Սըրբազան Հայրդ մեր, ողջ լեր ի Տէր» (26)։

Այս միաբանութիւնը կարճատեւ կ'ըլլայ. եւ Յակոբ Կաթողիկոս կը ստիպուի նոր ֆերման մը հանել Եղիազարի Հակաթոռ կաթողիկոսութեան դէմ։

Այս մասին Ջամբռի մէջ կը կարդանք.

---

(26) Դիւան Ս. Յակոբայ. Սիոն, Անդ, Նոյեմբեր–Դեկտեմբեր, թիւ 11–12. էջ 309։